## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 փետրվարի 2016 թվականի N 10-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ,ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 204-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի N 718-Ն որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 1292-Ն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 158-Ն համատեղ հրամանը, որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010թ. օգոստոսի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին >> N 204-Ա որոշումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ. փետրվարի 1
ք. Կապան